վորական, գլուղացիական լերիասարդությունը:

Մեր կոմսոմոլիստական բջիջներն ու կոմսո-
մոլիստները մի տեսակ սովոր չեն անկուսակցա-
կանի քննադատությունը լսելու: Կան դեպի ան-
կուսակցականները բյուրոկրատական վերաբեր-
մունքի փաստեր, որինակ, նման բացականչու-
թյուններ՝ «ճանաչում ենք քեզ, քո տեղն այս-
տեղ չե, այլ ուրիշ տեղ»: Ինքնաքննադատու-
թյունը պետք ե աղբյուրի պես խփի ներքեից,
հայտնաբերելով վոչ միայն կոմսոմոլիստական
կազմակերպությունների թերությունները, այլև
խորհրդային ու տնտեսական մարմինների թե-
րությունները: Մեծ թերություն ե այն փաստը,
վոր կոմյերիտական բանվորների քննադատու-
թյունն առայժմ մեծ մասամբ անուշադիր ե մնում:
Այդ թուլացնում ե բանվոր լերիտասարդության
նախաձեռնությունն ու լեռանդը ինքնաքննադա-
տությունը ծավալելու մեջ: Մենք պետք ե վոչ
միայն ինքնաքննադատության իրազործման, խո-
ցեցը բացող մարտիկներ լինենք, այլև նրա հետե-
վանքները հաշվի առնող, վորովհետև առանց արդ
ինքնաքննադատությունը վերածվում ե դատարկ
զրախոսության:

Այս պատճառով ինչու մեր թեթև հեծելադրները չլինեն նաև մշտական վերահսկիչներ ինքնաքննադատության իրականացման, թերությունների ուղղման և ինքնաքննադատության արդյունքների հաշվառման ասպարիգում։ Այդ դործի մեջ պիտի քաշվեն բոլոր կոմսոմոլիստները։

ԿՈՒՍՇԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավելի քան յերեխցե ՀԿԿ (թ) պետք եռ ուժեղացնի ղեկավարությունը ԼկթեՄ վրա։ Կուսղեկավարության մեթոդները՝ ամրացված կուսակցականների ուժերատափին յելությների ձևով տեղին են ստորին բջիջներում, վորոնց վորակալին կազմն անշուշտ թուլլ ե, ել չխոսած այն մասին, զոր ԼկթեՄ բջիջներին ամրացրած առանձին կուսակցականներ առաջարկում ելին ընդունել ԼկթեՄ մեջ կուլակին։ Հարկավոր ե փոփոխել կուսղեկավարության մեթոդները, ձգտելով, զոր կուսներկայացուցիչները կոմսոմոլում զբաղվելին վոչ միայն քաղաքականության, այլև կոմյերիտական պրակտիկայի կոնկրետ հարցերով։ Ամրացված կուսակցականները պետք ե վոչ թե ճնշեն նախաձեռնությունը, այլ զարգացնեն կոմյերիտականների մեջ քննադատական միտքը։ Մըանք են հիմնականում կոմսոմոլի մոտակա խըն-

դիրները, վորոնք բղխում են նրա այժմյան դրությունից։ Այդ խնդիրների մասին գուցե պետք լիներ յերկար խոսել, բայց լես կանգ տռա ընդհանուր գծերով և ամենահիմնական մոմենտների վրա։

Բոլոր վերևն ասածներից բղխում և դասակարգացն աղայքարի սրումը կոմսոմոլիստական յերիտասարդության համար։

Հայաստանի որինակով պետք ե լուրացնել, թե ինչպես խորամանկ և ճարպիկ են մեր թշրինումիները։ Զանազան դրոշների և վարագույրների յետերից նրանք այժմ պայքարում են և հարձակվում են այնաեղ, ուր մենք ավելի թույլ ենք յերբեմն շնորհիվ կոմունիստական բարեհոգության։ Անդը յերկոմը գտնում է, վոր ՀՀԿՅԵՄ կազմակերպության գասերը պետք ե հաշվի առնվեն։ Անդրկովկասի բոլոր կազմակերպությունների կողմից։

Մեր խնդիրն է Հայկական կազմակերպության գասերը հաշվի առնելով զորահավաքի լենթարկել լայն կոմսոմոլիստական մասսաները մեղթշնամի իդեոլոգիաների գեմ պայքարելու համար, ինչ ձեռվ ել վոր նրանք յերեան դան։

Յեզրափակելով, ինձ թվում է, թե Հայաստանի ԼԿՅԵՄ հիմնականում առողջ կազմակերպություն լինելով, ՀԿԿ (բ) կենակոմի և ՀամԼԿՅԵՄ

Անգրիերկոմի զեկավարության ներքո հաջողաւթյամբ զլուխ կրերի իր առաջ դրված խնդիրները և կվերացնի նշված սխալներն ու թերությունները:

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԿՅՑԵՄ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ
ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես և պետք եր սպասել, զեկուցումը մըտքերի աշխուժ և բուռն փոխանակություն առաջացրեց։ Ընկերներից շատերը վորոնք մինչև կենտկոմի վերջին պլենումը կենտկոմի կատարած սխալների մասին պարզ գաղափար չունելին, այս պլենումում բայց նիկորեն խոստովանեցին իրենց սխալները և յուրացրին ՀամեկՅՑԵՄ կենտկոմի կողմից ԼԿՅՑԵՄ զեկուցման մասին հանած բանաձեկի նշանակությունը։ Սա մտքերի փոխանակության մեջ դրական կողմն ե, բայց սրա հետ միասին, չի կարելի չնշել առանձին ընկերների յելու լիներում յերեան յեկած անձնական, վոչ հարկավոր, խառնակչության բնույթ կըող մոմենտներ։ Շատ ընկերներ ՀամեկՅՑԵՄ բանաձեկի և իմ զեկուցման վրա հիմնված, խոսելով ԿՅՑԵՄ դրության և նրա հետագա անելիքների մասին, ՀԱԿՅՑԵՄ դրության բարդացման հետ կապված, մոռանում ելին միութենական աշխատանքի գործնական կողմը, տար-

վում ելին միայն ընդհանուր հարցերը գնելով և
կենտկոմի կատարած սխայները վերլուծելով:
Ընկերները ճիշտ են յեղել, յերբ ուշադրություն
են նվիրել զեկուցման քաղաքական կողմին, բայց
մոռանալ միութենական աշխատանքի գործնա-
կան կողմը նույնպես չի կարելի: Մի քանիսի
կողմից ցանկություն եր նկատվում արդարանա-
լու և ցուց տալու իրենց ուղղափառությունը
դեպի նոր զեկավարությունը: Այս բոլորովին ա-
վելորդ ե: Բայց ընկերներից շատերը բավարար
չափով չեն յուրացրել հին զեկավարության սխալ-
ները: Առանձին ընկերների յելույթներում կաս-
կածներ ելին նկատվում կենտկոմի սխալների
նկատմամբ: Հարկավոր ե հիմնովին մտածել և
ամեն մի կասկած դեն շպրսել, վորովհետև կաս-
կածներից մինչև գործողությունը միայն մի քայլ
ե: Այսպիսի յելույթներից մեկը, վորի մեջ կաս-
կած եր նկատվում, ընկ. Դարբինյանի յելույթն
եր և այս յելույթի վրա յես ուզում եմ կանգ
առնել: Ըստ ընկ. Դարբինյանի դուրս ե գալիս,
վոր «բոլորն են մեղավոր»: Նման հարցադրումը
ճիշտ չե: Նախ՝ մեր նպատակն այն չե, վոր փըն-
տռենք մեղավորներին, այլ այն ե, վորպեսզի յե-
րևան հանենք թերությունները, սխալներն
ու նրանց պատճառները, վորպեսզի հետազա աշխա-
տանքի ժամանակ նրանցից խուսափենք և վերաց-

նենք: Յերկրորդ՝ հարցի ընդհանրացումն այն
մասին, թե բոլորն են մեղավոր, վորոշ չափով
ծածկում ե Կենտրոնական կոմիտեի թույլ տված
սխալները: Անկառակած Կենտկոմը կատարել ե
սխալներ, և առաջին հերթին այդ սխալները կա-
տարել ե Կենտկոմի պրեզիդիումը:

Այնուհետև ընկ Դարբինյանը նշում ե, վոր
ՀամեկթեՄ բանաձեռ ճիշտ ե, բայց միենույն ժա-
մանակ նա արձանագրում ե և համագումարի վո-
րոշումների ճշտությունը: Հարկավոր ե դեն զցել
ամեն մի «բայց» և ամբողջությամբ ու լիովին
միանալ Կենտկոմի բանաձեին, վորն ուղղում ե
Կենտկոմի սխալները, ինչպես և այն սխալները,
վոր թույլ են տրված համագումարում ԼԿԹԵՄ
Կենտկոմի զեկուցման առթիվ:

Ընկ. Դարբինյանի հետ պետք յեղավ յերկար
դրուցել նախ քան պլենումն այն մասին, վոր
համագումարում Կենտկոմի հաշվետվության առ-
թիվ հանած բանաձեռում սխալ եր կատարված և
ընկ. Դարբինյանն ինչ:ինչ պատճառներով չեր
ուզում այդ խոստովանել, պատճառաբանելով այդ
նրանով, վոր համագումարները չեն կարող սխալ-
վել: Իհարկե, դա փաստ չե:

Ընկ. Դարբինյանն առաջ ե քաշում մի բո-
լորսվին վոչ հարկավոր խնդիր այն մասին, թե
Ծերունին հեղինակություն չունի Լենինականում:

Այդ հարցը բոլորովին ուրիշ ե և իմ զեկուցման
հետ կապ չունի, այդ հարցը կարելի է քննել
ուրիշ կարգով և միտք չուներ դուրս ցցել կազ-
մակերպության դրության և անելիքների մասին
կատարված զեկուցման առթիվ առանձին ընկեր-
ների աշխատանքի բնույթի ինդիքները:

Ընկ. Հովհաննիսլանի չելույթի ժամանակ
ընկ. Դարբինյանը շատ հուզվում եր և ըստ իս-
միանգամայն վոչ հարկավոր, կթեՄ կենտկոմի
անդամին՝ անհարմար բացականչություններ եր
թույլ տալիս տեղից, որինակ, «Երբ դու այստեղ
չելիր, լես այստեղ աշխատում ելի»։ Յես կար-
ծում եմ, վոր ԼկթեՄ կենտկոմում նման բացա-
կանչությունները տեղին չեն (Դարբինյան՝ դա-
այբուրեն ե)։ Այդպիսի այբուրենը, ընկ. Դարբին-
յան, պետք ե լուրացնել և գործնականում կիրառել։

Ընկ. Դարբինյանի կողմից նկատվում եր մե-
ղադրանք նոր զեկավարության հասցելին Ճիշտ
ե, դեռ չի կարելի խոսել նոր զեկավարության
աշխատանքի խոշոր նվաճումների մասին, բայց
չի կարելի նաև հապճեպ լեզրակացություններ
հանել։ Փոխանակ մեղադրելու նոր զեկավարու-
թյանը, վորն ստիպված է շատ դժվարին պայ-
մաններում աշխատելու և վորին լերբեմն հին դե-
կավարությունից առանձին ընկերներ լուելայն
խանգարում են աշխատելու, դրա վոխարեն ընկ.

Դարբինյանը պետք է ոգնի նոր ղեկավարությանը և նրա հետ ձեռք ձեռքի տված պետք ե աշխատի կենտկոմի և ՀամլեթեՄ Անդրլերկոմի վորոշումներն իրադութելու համար։ Նման լելութների փոխարեն ընկ. Դարբինյանը կարող եր ավելի մեծ ոգուտ ցույց տալ կազմակերպությանը, լեթե իր լելութի մեջ խոսեր այն մասին, թե ինչպես են արտացոլել ԼեթեՄ կենտկոմի սխալները Բանակում. ընկ. Դարբինյանն աշխատում է Բանակում, ուր դիվիդիալի կոմսոմոլիստների մեջ կան վորոշ բացասական տրամադրություններ, կամ գուցե ընկ. Դարբինյանը կարծում է, թե բացասական տրամադրություններ գոլություն ունեն միայն ԿթեՄ քաղաքացիական կազմակերպությունների մեջ։ Յեթե նա այսպես է կարծում, ապա սխալվում եւ։

Խոկալժմ, կուսակցության կենտկոմին կից հրավիրված խորհրդակցությունից հետո, ընկ. Դարբինյանն իր լելութի մեջ լիովին և ամբողջությամբ համաձայնվեց կենտկոմի բանաձեկի հետ, և յս կարծում եմ, վոր կարելի լե բավարարվել ընկ. Դարբինյանի այդ հայտարարությամբ և ցանկանալ, վոր ընկ. Դարբինյանն իր այդ հայտարարությունը գործնականում կիրառի միության մեջ տարվելիք հետագա աշխատանքի մեջ։

Ապա յես ուզում եմ կանգ տանել ընկ. Ար-

տաշեսի լելութի վրա։ Ընկ։ Արտաշեսն այստեղ շատ տաք խոսում եր և կենտկոմի պլենումին ապացուցում, վոր ՀամեկՅթեՄ գնահատականը կենտկոմի այն սխալների մասին, վոր նա արել և տրոցկիստական ոպողիցիալի դեմ մղած պալքարում, վերաբերվում ե միայն մի խումբ աշխատողների, վորոնց վերցըել են, և վոչ թե կենտկոմի ամբողջ նախադանությանը։

Ապա նա խոսում եր այն մասին, վոր սխալը կատարված ե միայն կազմակերպչական հարցերի ասպարիզում։ Սխալ ե կարծել, թե գնահատականը վերաբերվում ե միայն մի խումբ աշխատողների, անկասկած բոլոր դեկավար ընկերները մեծ սխալ են կատարել, չչուրացնելով Անդրյերկոմի բանաձեռի նշանակությունը տրոցկիստական լերիտասարդական միության հարցի մասին։ Սխալը թույլ ե տրված վոչ միայն կազմակերպչական խնդրի մեջ, այլ գլխավորապես տրոցկիստական ոպողիցիալի աշխատանքի դրությունը գնահատելու և նրա դեմ պալքարելու մեջ։ Միթե այն փաստը, վոր կենտկոմը լերկար ժամանակ չվճարապարակել կենտկոմի բանաձեռն Աչուանի խըմբակին գնահատական տալու խնդրի շուրջը, միթե այն փաստը, վոր կենտկոմը համագումարում սխալ ե կատարել կենտկոմի հաշվետվության մասին հանած բանաձեռի մեջ, կազմակերպությանը բո-

լորովին սխալ ուղղությամբ կողմնորոշելով, մի՛թե
այս փաստերը չեն խոսում այն մասին, վոր սխալը
կատարվել ե վոչ միայն կազմակերպչական խըն-
դրի ասպարիգում։ Փաստերը համառ բան են։
Բացի այդ, միանգանայն սխալ ե կազմակերպչա-
կան գիծը քաղաքական գծից անջատ քննելը։
Բայց ի կները լերբեք հարցն ալղպես չեն դնում։

Կազմակերպչական գիծն ամենասերտ կեր-
պով կապված ե քաղաքական գծի հետ և բղխում
ե կազմակերպության քաղաքական գծից։ Բայց
այդ գեղքում ընկ. Արտաշեսն իրավացի չե, վո-
րովհետեւ արոցկիզմի գեմ մղած պայքարի սխալ-
ները խորն սկզբունքային քաղաքական բնույթ
ունեն, նրանք արտահայտվել են անվճուական
իդեոլոգիական պայքարի մեջ արոցկիզմի գեմ,
արոցկիստական ոպողիցիային արված սխալ
գնահատականի մեջ Հայաստանի պայմաններում։
Միքանի ընկերների կողմից նկատվում ելին խենթ
ու խելառ առաջարկություններ «լերիտասարդու-
թյան արոցկիստական խմբակ կազմակերպել
արոցկիզմի գեմ պայքարելու համար»։ Դուրս ե
գալիս, վոր արոցկիզմի գեմ պայքարելու համար
պահանջվում ե կազմակերպել վոչ թե լենինյան
խմբակ, այլ արոցկիստական, վորպեսզի սախ ու-
սումնասիրեն արոցկիզմը և ապա նրա գեմ պայ-
քարեն։ Ի՞նչ ե այս, լեթե վոչ քաղաքական շփոթ։

Ազս բոլորն արձանագրում եւ Հայաստանի
ԼԿՅՑԵՄ Կենտկոմի իդեոլոգիական պալքարի թու-
լությունը և սխալ գիծը:

Դուք, ընկ. Արտաշես, ասում ելիք, վոր
անտեսական աշխատանք այնուամենայնիվ տա-
նում ելին: Ի՞արկե տնտեսական աշխատանքը տարել
են, բայց գժբախտաբար, այդ աշխատանքը շատ
վատ են տարել:

Այժմ ընկ. Արտաշեսին վերցնելու մասին:
Ընկ. Արտաշեսն ասում ե, վոր իբր թե Անդր-
յերկոմը ճիշտ չե ձևակերպել նրան վերցնելու
պատճառը՝ «իբրև կտրվածություն մասսալից և
ալին»: Յերկում ե, թե ընկ. Արտաշեսը շատ ճիշտ
ձևակերպիչ ե, բայց լեթե գուք սիրում եք ճիշտ
ձևակերպել, ապա միթե հասկանալի չե, վոր
Կենտկոմի այն աշխատողները, վորոնք կես տա-
րի չեն այցելել արտադրական բջիջները, չեն
լեղել բանվոր յերիտասարդության մոտ, վորը
Հայաստանում այնքան աննշան թիվ ե կազմում,
անշուշտ, մասսալից կտրված են: Իսկ ընկ. Ար-
տաշեսը, լինելով տնտեսական աշխատող, մասսալի
հետ կապված չի լեղել: Ինչու այդ մասին չի
կարելի խոսել, լեթե այդ անհրաժեշտ ե, վոր-
պեսզի այդ հիվանդությունն ակտիվիստների միջից
վերացվի:

Ընկ. Գրիգորյանի և ընկ. Մելիքյանի յելութ-

Ների վրա յես կանգ չեմ տռնի, վորովհետեւ
ընկերներն իրենց հայտարարությունների մեջ
ամբողջությամբ և լիովին միանում են ՀամելեթեՄ
կենտկոմի բանաձեին:

Միքանի խոսք ընկ. Շահինյանի լելութի
մասին: Յես ուզում եմ պարզած լինել ընկեր
Շահինյանին, վոր դաշնակիզմը բուրժուական հա-
կանեղափոխական մի կուսակցություն ե, վորն
արմատներ և պայմաններ ունի իր գոյության հա-
մար Հայաստանում—յերկրի մանր բուրժուական,
գլուղացիական բնությը, նոր տնտեսական քա-
ղաքականությունը և այլն: Մենք պայքարում
ենք վոչ միայն դաշնակցական կուսակցության
մնացորդների դեմ, այլ այն ռեալ վտանգի դեմ,
վորպիսին ներկայացնում ե դաշնակիզմը: Յեկ
արդ ռեալ վտանգը, ինչպես մինչեւ տրոցկիստա-
կան ոպողիցիալի դեմ պայքարելը, այնպես և
պայքարի պրոցեսում, կենտկոմն իր առջև պարզ
կերպով չի դրել: Այնուհետեւ կուսակցության հետ
յեղած փոխհարաբերությունների մասին: Անա-
լոգիա անցկացնել Զինական կթեՄ ու Զինկոմ-
կուսի և ՀՀկթեՄ ու ՀԿ (բ) կ միջև միանգամայն
սխալ ե: Զինաստանում բոլորովին ուրիշ պար-
մաններ են: Զի կարելի մոռանալ, վոր այստեղ
դեռ չկա պրոլետարիատի դիկտատուրա, բանվոր
դասակարգը պայքարում ե իշխանության համար,

իսկ մեղնում իշխանությունը գտնվում եւ բանվոր գասակարգի ձեռքում, վորի ղեկավարն և կոմիտուսակցությունը և մեղնում պայմաններն ու փոխհարաբերությունը կուսկաղմակերպությունների, Կոմիտուսի Կենտկոմի հետ մի փոքր այլ են: Կոմսոմոլին աշխատում ե ԿԿ_(բ) անմիջական ղեկավարության տակ: Մեր պայմաններում մենք սետք ե կոմսոմոլը դաստիարակենք կուսակցության վորոշումներն անշեղ կերպով կյանքում կիրառելու համար, վորովհետեւ կոմսոմոլի է կազմակերպությունը չի կարող կուսակցությունից ձախ լինել: Այս լերիտասարդության բայց կիկան դաստիարակության կարևորագույն պայմաններից մեկն ե: Խոսք կարող ե լինել միայն կուսղեկավարության լավացման մասին, կոմսոմոլիստների կողմից կուսակցության գծի լուրացման մասին և վոչ թե կուրորեն ամրացված կուսակցականների դիրեկտիվներին լենթարկվելու մասին: Ընդհանուր-կուսակցական գծի լուրացումը լերիտասարդության բայց կիկան դաստիարակության ամենազլիսավոր պայմանն ե:

Ցես այսուամենայնիվ սպասում ելի, վոր իմ զեկուցման առթիվ դուրս կդան Կենտկոմի միշտք նախկին ղեկավար ընկերներ՝ Անուշավան, Վարդապետյան և այլն, իսկ լեթե չեն դուրս գա, ապա հայտարարություն կուղարկեն այն մասին,

թե ինչպես են նրանք նայում ՀամեկթեՄ կենտ-
կոմի վորոշմանը:

Այս փաստը, վոր նրանք վոչ մի խոսք չա-
սացին, խոսում ե այն մասին, վոր նրանք թե-
րագնահատում են ՀամեկթեՄ կենտկոմի բանա-
ձեր կամ վոր այդ ընկերների շարքում դեռևս
վորոշ կասկածներ կան: Ճիշտ ելին մի շարք
ընկերների յելույթները, վորոնք կանգ ելին առ-
նում Հայաստանի ԿթեՄ գործնական խնդիրների
վրա՝ կապված կազմակերպության առաջ դրված
ընդհանուր խնդիրների հետ: Այս իմաստով, իհարկե,
ընկ. Ոհանջանյանը ճիշտ եր, յերբ կազմակերպու-
թյան ուշադրությունը դարձրեց ԿթեՄ ինտեր-
նացիոնալիստական դաստիարակությունն ուժե-
ղացնելու անհրաժեշտության վրա: Նրա յելույթի
ժամանակ յես նկատեցի առանձին ընկերների
կողմից անվտանության վորոշ նշաններ, իբրև
վոչ տեղական աշխատողի: Յես կարծում եմ, վոր
նման յերևույթներ չպետք ե տեղի ունենան մեր
ԿթեՄ կենինյան կազմակերպության մեջ: Մեզ
համար միենալունը պիտի լինի, յեթե ընկերները
Հայաստանի պայմաններում ճիշտ են իրազործում
մեր կուսակցության քաղաքականությունը, ապա
մենք այդ ընկերներին պիտի շրջապատենք նույն-
պիսի հարգանքով, ինչպես և տեղական աշխա-
տողներին: Մենք պետք ե վճռական գիծ վեր-

յնենք հենց տեղի բանվորներից, բատրակներից և չքավորներից տեղական աշխատողներ պատրաստելու, բայց ներկա մոմենտում, լերբ Հայաստանի կթեՄ խնդիրները բարդացել են, մենք չենք կարող հրաժարվել թեկուզ հենց ուրիշ կազմակերպություններից լեկած աշխատողներից։ Այս իմաստով ՀամեկթեՄ կենտկոմը միանգամայն ճիշտ է հանձնարարել Անդրբերկոմին 10 աշխատող փոխադրել ուրիշ կազմակերպություններից՝ Թիֆլիզից և Բագվից Հայաստան, Հայաստանի կթեՄ ամրացնելու համար։

Մի փոքր անճիշտ և վոչ բոլորովին ուղիղ կերպով ձեակերպեց ընկ. Ոհանջանլանն այն հարցը, թե իդեոլոգիան պետք ե խփել իդեոլոգիայով։ Յես կարծում եմ, վոր ընկ. Ոհանջանլանն ինձ հետ կհամաձայնվի, վոր դասակարգալին թշնամուդեմ մենք դուրս ենք գալիս պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր միջոցներով, իսկ մեր հիմնական ուշադրությունը տվյալ ետապում, իհարկե, պետք ե ուղղված լինի մեր իդեոլոգիական պայքարն ուժեղացնելու կողմը։ Նրա դեմ պայքարելու խիրուրգիական միջոցները միշտ պետք ե պատրաստ լինեն։

Միքանի ընկերներ հարցնում են՝ բանն ինչու՞ն ե, վորոնք են դեկավարությունը փոխելու պատճառները և ինչպես վերաբերվել հին դեկա-

վարության ընկերներին։ Յես կարծում եմ, վոր
դեկավարությանը փոխելու պատճառները ձեզ
հասկանալի լին։ Կենտկոմը կրկնակի սխալ ե
կատարել, հետևաբար մի շարք դեկավար ընկեր-
ների պետք ե փոխել, կազմը պետք ե նորոգել,
վորպեսզի ուժեղացվի բայլշեիկյան ղեկավարու-
թյունը Հայաստանի կՑեՄ մեջ։

Պետք ե արդյոք բոլորին վերցնել։ Միքանի
ընկերների կողմից, մանավանդ հին, միութենաւ-
կան աշխատանքից ազատված ընկերների կողմից
Նկատվում եր առաջարկություն այն մասին, վոր
իբր պետք ե բոլոր հին աշխատողներին ազատել։
Կա այսպիսի տրամադրություն՝ «յես գնում եմ,
ուրեմն թող գնան և բոլոր մյուս հները, տեսնենք,
թե ինչպես ե աշխատելունոր ղեկավարությունը»։
Նման տրամադրություններ բոլորովին անթույլա-
տրելի լին, մենք հարցն այդպես գնել չենք կա-
րող։ Մեր խնդիրն ե, վոր հին ղեկավարության
ընկերները գիտակցեն կատարած սխալները և
այս դեպքում մենք պետք ե բանվոր և բարրակ
կոմիերիտականների ամբողջ ակտիվն աշխատանքի
լծենք և համախմբենք նոր ղեկավարության շուր-
ջը։ Աշխատանքը խանգարող ընկերներին հարկա-
վոր ե վճռականորեն հեռացնել աշխատանքից։

Բոլորովին վոչ բայլշեիկյան եր ընկ. Աբրամ-
յանի հարցադրություն այն մասին, թե մեր կազմա-

կերպության մեջ զարդացվում եր «կումեղինիզմը», իսկ այժմ պիտի զարդացվի «նիկուշիզմը»: Բայ իս, նման փիլիսոփայություն զարգացնել հարկավոր չել:

Միքանի խոսք պիոներկազմակերպության մասին: Յես ժամանակ չունելի իմ զեկուցման մեջ կանգ առնելու պիոներական աշխատանքի հարցերի վրա: Անկասկած մեզ պետք կլինի կենտրոնացնել կազմակերպության ուշադրությունը նաև պիոներկազմակերպության աշխատանքի վրա: Մենք հնարավորություն չենք ունեցել հետազոտելու պիոներկազմակերպությունները, բայց Անդրքերկոմի վերջին պլենումը վորոշել ե կատարել Հայաստանի պիոներկազմակերպության հատուկ հետազոտում, վորպեսզի այդ գծով նշվի ամուր, ցայտուն իդեոլոգիական աշխատանք: Ինձ ընկերները պատմում ելին, վոր պիոներկազմակերպության ակտիվի մեջ կան առետրական ելեմենտներ, ինչպես և գնդապետների վորդիներ, վոր առանձին տեղերում, որինակ, Եջմիածնի գավառում կազմակերպվում են հակակոմունիստական խմբակներ, վորոնք տրամադրված են պիոներկազմակերպության դեմ: Յես կարծում եմ, վոր այս փաստերը միանգամայն բավական են, վոր Հայաստանի Լեթե՛Մ հենտկոմն ավելի ուշադրություն հատկացնի պիոներկազմակերպությանը,

քան այդ մինչեւ ալժո՞յեղել եւ Անհրաժեշտ և
ջոկել ԿթեՄ լավ, ակախվ աշխատողների կազր
պիոների կազմակերպության մեջ աշխատելու հա-
մար:

Յես կուզենալի ձեր ուշադրությունը դար-
ձնել ևս մի հարցի վրա—ոռւսերեն լեզվի ուսում-
նասիրության վրա: Ինձ թվում ե, վոր մեծ թերու-
թյուն ե այն հանգամանքը, վոր Հայաստանի
կոմյերիտմիության ակտիվը բոլորովին չի իմա-
նում ոռւսերեն լեզուն: Ռուսերեն իմացողների
թիվը շատ չնշին ե: Հայաստանի ԿթեՄ ընդամենը
30 որինակ «Նոմսումուսկայա Պրավդա» յե ստա-
նում: Սա ուղղակի անթուզատրելի յե: Յես կար-
ծում եմ, վոր վատ չեր լինի, վոր ակտիվն ուսումնա-
սիրեր ոռւսերեն լեզուն և այդ դեպքում նրանց
հեշտ կլիներ ծանոթանալ մյուս կազմակերպու-
թյունների կյանքին և դրությանը: Բայ իս, այս-
տեղ վոչ մի դժվար բան չկա: Հիշում եմ, թե
ինչպես 1923 թվին ԱլկթեՄ կենտկոմում պարտա-
զիր կարգով անց ելին կացնում ոռւսերեն լեզվի
ուսումնասիրությունը գավառի ԿթեՄ ակտիվի
կող նից և հետևանքն այն յեղավ, վոր մեր ակտիվը
բավական աճեց:

Այսուհետեւ քաղուսուցման մասին: Ակսվում
ե քաղուսուցման նոր տարին, իսկ մենք դեռևս
սլատրաստ չենք դրա համար: Անհրաժեշտ ե այս

քաղուսուցման տարին գործն այսպես դնել, վորպեսզի այն սխալները, վորոնք տեղի լին ունեցել Հայաստանի կթեՄ աշխատանքի մեջ վերջին տարին, հաշվի առնվեն քաղուսուցման պարապմունքների ժամանակ: Վորպեսզի կենտկոմի և Անդրյերկոմի դիրեկտիվներն իդեոլոգիական ֆրոնտի պալքարի խնդիրների մասին իրենց լիակատար արտացոլումը զտնեն քաղուսուցման մեջ: Անհրաժեշտ կլինի նաև մեծ նախապատրաստական աշխատանք կատարել խորհուրդների նոր վերընտրությունների առթիվ և այս որինակով ցուցաբեր, վոր կոմսոմոլիստական կազմակերպությունը հիմնականում առողջ է, վոր նա ուղիղ կերպով ե իրագործում մեր կուսակցության գիծը:

Յեզրափակման խոսքում մի անգամ ես ուզում եմ ձեր ուշադրությունը դարձնել միության տնտեսական աշխատանքն ուժեղացնելու վրա, միությունը անտեսական շինարարությանը, գյուղատնտեսության կոլեկտիվացմանը, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուն և այլն մասնակից անելու անհրաժեշտության վրա: Մենք միջանի ընկերների հետ յեղանք ձեռնարկություններում, արտադրության մեջ և մենք հանդիպում ենք գոքրահասակներին ծեծելու փաստերի: Նման յերևությունները մեր պայմաններում անթուլատելի լին, այդ յերևությունները ցուց են

տալիս մեր բջիջների տնտեսական աշխատանքի թուլությունը և մոտակա ժամանակներում արդ աննորմալությունները պետք ե վերացնել:

Հայաստանի կթե՛Մ ղեկավարության փոփոխությունը ցուց տվեց, վոր ակտիվի պատրաստությունը շատ թուլ ե ընթանում, մանավանդ թուլ են պատրաստվում բանվորների և բատրակների կազմերը, — ղեկավարության մի փոքր փոփոխություն և ահա Հայաստանի կոմյերի տմիությունը համապատասխան ակտիվի պակասություն ե զգում հին աշխատողներին փոխելու համար։ Այս խոսում ե այն մասին, վոր մենք չդիտենք բավարար չափով տուածքաշել և աճեցնել ակտիվ և այս հարցի վրա պետք ե կենարոնացնել ուշադրությունը։

Վերջացնելով, յես կարծում եմ, վոր այս պլենումում պետք կլինի հասնել կատարյալ միասնականության և կուսպծի լուրացման։ Պլենումից հետո պետք ե բոլոր կազմակերպությունների մեջ համապատասխան բացատրական աշխատանք տառնել և արդեն իրոք անցնել Համել կթե՛Մ վորոշումների իրագործմանը։ Շատ ընկերներ դեռ սիրում են սխալների մասին խոսել, իսկ իրոք իրենք շատ քիչ գործ են կատարում։

Այժմ հարկավոր ե ուշադրությունը կենարոնացնել Համել կթե՛Մ բանաձեկի իրագործման վրա։ Իսկ նոր ղեկավարությանը մենք խորհուրդ կտանք

արթուն լինել, չորս բոլորը դիտել և ավելի շատ
ուշադրություն դարձնել գործնական աշխատանքի,
կենտկոմի կատարած սխալներն ուղղելու վրա,
ընդգրկել և համախմբել դեկավարության շուրջը
բանվոր և չքավոր լերիտասարդության աճող նոր
ակտիվը:

Յես կարծում եմ, վոր Հայաստանի ԿՅԵՄ
կենտկոմի նոր դեկավարության և Անդրյերկոմի
աջակցության շնորհիվ մենք կկարարողանանք
իրազործել ՀամեկՅԵՄ կենտկոմի և Անդրյերկոմի
դիրեկտիվները և հետեւալ պլենումին կկարո-
ղանանք մեր աշխատանքների հանրագումարը տալ
և կազմակերպությունը դուրս բերել նևա դժվա-
րին դրությունից:

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՆԱԳԵՎԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՄՈՒԼԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով Հայոստանի ԼԿՅՑԵՄ կենտկոմի քար-
տուղար ընկ. Մեհրաբյանի զեկուցումը և կենտ-
կոմի պատասխանատու հրահանգիչ ընկ. Մարչի-
կի հարակից զեկուցումը. կազմակերպության
դրության և աշխատանքների մասին՝ Համլկյցեմ
կենտկոմը մատնանշում ե. —

ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

1. ՀԼԿՅՑԵՄ նախկին զեկավարությունն ա-
մենախոշոր սխալը թուզ տվեց՝ անսկզբունք կեր-
պով պաշտպանելով և չքննազատելով հին կու-
սակցական զեկավարությունը, վորը մի շաբք խոշո-
րագույն քաղաքական սխալներ եր կատարել (դաշ-
նակցություն կուսակցության բնորոշումը վոր-
պես մանր բուրժուական կուսակցություն, ին-
տելիգենցիալին շերտավորման տեսակետից չմո-
տենալը, հակահարված չտալը կուսակցության
այն միքսնի անդամներին, վորոնք չելին տես-

նում կուրակին և նրա ազգեցությունը Հայաստա-
նում, և այլն):

Միւթյան նախկին ղեկավարության կողմից
ազգայնական վտանգի թերագնահատումը և մո-
ռացության տալլ կազմակերպությունը տարան
զեղի յերիտասարդության համար մղվող պարա-
քարի թուլացումը։ Միաժամանակ դրա հետեանքն
լեղավ պարագարի թուլացումը նացիոնալիզմի ներ-
կայացուցիչների — հականեղափոխական կուսակ-
ցությունների և խմբակների (գաշնակների, մեն-
շեկիկների, արոցկիստների և սպեցիֆիկյան իդե-
ոլոգիալի մնացորդների) դեմ։ Յերիտասարդու-
թյան ինտերնացիոնալիստական դաստիարակու-
թյան խնդիրները պարզուոշ կերպով չելին հա-
կադրվում նացիոնալիզմի մնացորդներին և նրանց
ազգեցությանը, վորի հետեանքով նկատելի կեր-
պով աշխուժացած բուրժուական-ազգայնական
յերիտասարդական կազմակերպությունների (գաշ-
լերիտ, յերիտասարդ «մարքսիստները» մենշեկիկ-
ները, ոպողիցիոն խմբակները, և այլն) գործու-
նելությունը։ Ազգային քաղաքականության ուղիղ
կիրառման խոշորագույն աղավաղում ե հանդի-
սացել նաև այն, վոր բանվոր յերիտասարդու-
թյունը չի լեզել հիմնական հենարանն այս աշ-
խատանքում։

ՀԱՄԼԿՅԵՄ. Կ. Կ. ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե

Յելնելով սրանից՝ Համլկյեմ կենտկումը փոր-
պես կենտրոնական խնդիր ՀԼԿՅԵՄ առաջ դնում
ե իզեղողիտական ֆրոնտում յերիտասարդության
համար պայքարի ծավալումը Անհրաժեշտ ե ակ-
տիվ և բացարձակ պայքար մղել նացիոնալիզմի
և նրա ներկայացուցիչների — դաշնակների, մհն-
շեկիների, տրոցկիստների, սպեցիֆիկան իդեո-
լոգիաի դեմ, ողտագործելով դրա համար Վրաս-
տանի կազմակերպության փորձը։ Անհրաժեշտ ե
նացիոնալիզմի մնացորդներին պարզորոշ կերպով
հակադրել — կոմիերիտականների և աշխատավոր
յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիա-
րակությունը, առանձնապես կատաղի պայքար
մղելով ազգայնական վտանգի թերագնահատման
տենդենցների դեմ, ակտիվի պասսիվության դեմ,
հանդեպ դասակարգավիճն խորթ կազմակերպու-
թյունների։ Այս պայքարում բանվոր յերիտասար-
դությունը պիտի հանդիսանալ հիմնական հենա-
րանը։

Այս ամերող աշխատանքը պիտի կատարել
հետեւալ ճանապարհով։ —

ա) Կազմակերպության մեջ վճռականորեն
կիրառելով Համլկյեմ VIII համագումարի վո-
րոշումները՝ ազգային հանրապետություններում

և շրջաններում միության կատարելիք աշխատանքի մասին, քննության առնելով ու մշակելով այդ վրոշումներն ամեն մի բջիջում, տեղական մամուլը («Յերիտասարդ բայց և իմ» ամսագիրը, «Ավանգարդ» թերթը) տրամադրելով նացիոնալիզմի դեմ պայքարելու գործին, ինչպես յերիտասարդության շրջանում, այնպես և նացիոնալիզմի արտահայտությունների դեմ կոմսոմոլում, ցուց տալով նացիոնալիստական տրամադրությունների փաստեր կոնկրետ որինակների և մարդկանց վրա՝ Միության մեջ կազմակերպելով հեղափոխական շարժման և կուսակցության պատմության սիստեմատիկ ուսումնասիրում և առանձնապես կոմկուսակցության կողմից բուրժուական ազգայնական և սոցիալ-դեմոկրատական կազմակերպության (մենշևիկներ, մոռսավաթիստներ, բունդ, դաշնակներ, եսերներ, տրոցկիստներ և այլն) դեմ մղած պայքարի պատմության ուսումնասիրություն, ձմեռային քաղդաստիարակության սիստեմի մեջ մտցնելով կոմկուսակցության ազդային քաղաքականության ուսումնասիրությունը, կուսակցական և խորհրդային որդանների առաջնարց հարուցելով կուսակցության ազգային քաղաքականությունը բոլոր բարձրագույն և միջնակարգ դպրոցներում ուսումնասիրության առարկա դաշնելու մասին:

կենտկոմն առաջարկում և ՀՂԿՑԵՄ կենտ-
կոմին՝ ուղղել ազգային փոքրամասնությունների
մեջ տարվող աշխատանքի թերությունները, ու-
ժեղացնելով կոմինտերնի ղեկավարությունն ազ-
դային փոքրամասնությունների բջիջների վրա,
նրանց համար գործածելով իրենց մայրենի լե-
զուն:

բ) Կոմիերիտական բջիջների ղրավոր և կեն-
դանի կապի ամրապնդումը կոմսոմոլի լեղբարա-
կան կազմակերպությունների հետ, ինչպես ար-
տասահմանում, այնպես ել ԽՍՀՄ սահմաններում
(Բագու, Թիֆլիս, Դոնբաս), առանձին ուշադրու-
թյուն դարձնելով լեղբարական կոմիերիտական
կազմակերպությունների կողմից ազգային-դեմո-
կրատական, բուրժուական և կրօնական լերիտա-
սարդական կազմակերպությունների դեմ (սոցիո-
լիստական լերիտմիություն, կաթոլիկան լերիտ-
միություն, և այլն) մղվող պարզաբին:

գ) Ակտիվ հարձակման անցնել լերիտասար-
դության վրա ունեցած կղերականության և ա-
ղանդավորների աճող ազգեցության դեմ, կազմա-
կերպությանը և անկուսակցական լերիտասարդու-
թյանը լայն կերպով պարզաբանելը հայկական լե-
կեղեցու հակահեղափոխական բուրժուական ելու-
թյունը, նրա անխղելի կապը հայկական ներքին
և արտաքին բուրժուազիայի հետ, կազմակերպե-

լով բջիջների հակակրոնական պատքարը (անաստվածների խմբակներ, դասախոսություններ և զրուցներ բնագիտական հարցերի մասին և այլն):

Առանձնապես անհրաժեշտ ե առաջիկայում հրատարակել մասսայական հակակրոնական տառագիր և հակակրոնական գրականություն՝ հայերեն լեզվով:

դ) Բացատրել յերիտասարդությանը կուսակցության գիծն ինտելիգենցիայի մեջ տարգող աշխատանքի ասպարիզում, գրավելով նրա լավագույն մասը (մանավանդ ուսուցիչներին ու գլուղատնտեսներին) կոմյերիտական բջիջների գործնական կուլտուրական մասսայական աշխատանքներին:

Կենտկոմն անհրաժեշտ ե դանում բարձրագույն և միջնակարգ գպրոցների գտումը դասակարգայնորեն մեղ անհարազատ տարրերից (կուլակների, ունեորների, քահանաների, առետրականների յերեխաներ և այլն), նույնը դասատուների պերսոնալի մասին, առանձին ուշադրություն դարձնելով բանվորների, բատրակների, չքավոր ու միջակ գլուղացիների յերեխաներին գպրոցներում ընդգրկելու վրա, լուսժողկոմատի հետ լուծելով սովորողների այս կատեգորիայի նյութական ապահովման հարցը,

ՀԼԿՑԵՄ կենտկոմը պետք ե հարց դնի կու-

սակցական - խորհրդավիճ մարմինների առաջ միշտ շարք ուսումնական հիմնարկներ (և մանավանդ 2-րդ աստիճանի դպրոցները) Հայաստանի տնտեսական կարիքներին հարմարեցնելու և գլուղերիտ ու գլուղատնտեսական դպրոցների նյութական դրությունը բարելավելու համար, այդ դըպրոցների ակադեմիական և գործնական աշխատանքը կապելով կոլտնտեսությունների շինարարության և սովորողներից առաջավոր կոռպերատոր-գլուղացիներ պատրաստելու համար:

Կոմմոմոլիի կոմիտեները պիտի բարելավեն դպրոցական բջիջների աշխատանքի ղեկավարությունը և վերահսկողությունը, նըանցում աշխատելու ուղարկելով տեսականորեն պատրաստված, միության պրակտիկավիճն ծանոթ, դասակարգայնորեն - կոփիված բանվոր ակտիվիստների, հաղթահարելով կոմիերիտական բջիջների կարգածությունն անկուսակցական ուսանողներից:

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2. Սոցիալիստական շինարարությանը մասնակցելու խնդիրները (արտադրության ոացիոնալիզացիան, գլուղատնտեսության կոռպերացումը, պալքար բցուրոկրատիզմի դեմ և այլն) չեն հանդիսացել կոմիերիտական բջիջների աշխատանքը առանցքը: ՀԼԿՑԵՄ արտադրական կազմակեր-

պությունները թուզ կերպով են զբաղվել բան-
վոր լերիտասարդության նյութական կենցաղային
խնդիրների լուծմամբ, իսկ գյուղական կաղմա-
կերպությունների պրակտիկայում տեղ են գտել
կուսակցության դասակարգային քաղաքականու-
թյան կողիտ աղավաղումներ, վորի հետևանքով
անտեսատեր-կոմիտերիտականների զգալի մասը
դարձել ե ունեոր և կուլակ: Կենտկոմը գտնում
է, վոր կաղմակերպության կողմից իգեորդիա-
կան պալքարի ծավալումն անիմաստ ե առանց
բջիջների մասնակցությունը անտեսական—կուլ-
տուրական շինարարության մեջ աշխուժացնելու
և առողջացնելու:

Այս նպատակով անհրաժեշտ ե. —

ա) Անմիջապես անցնել Համեկթե՛Մ Ասդրը-
յերկոմի հրահանգի կիրառմանը բանվորական
բջիջների տնտեսական կրթական աշխատանքի
վերաբերքալ: Աշակերտներին կցել վորակյալ բան-
վորներին, միջոցներ ձեռք առնել, վոր ֆաբ-
դործուսներն ավելի լրիվ կերպով ընդունեն բրո-
նիան, լենթարկվեն համապատասխան վերասար-
քավորման, աշակերտության ուսուցումը դնել
ծրագրված հիմքերի վրա, սիստեմատիկ կոնտրոլի
լենթարկել աշակերտներին ցածր կարգերից բար-
ձրերին փոխադրելը, ձեռնարկներում կազմակեր-
պելով մշտական աշակերտական հանձնաժողով-

ներ, կազմակերպել յերիտասարդության մասսա-
յական մասնակցությունը ձեռնարկության ռա-
ցիոնալացման գործին, արտադրական վերահսկիչ
հանձնաժողովներին, խորհրդակցություններին
քննության առնելով բջիջների և անկուսակցական
յերիտասարդության ժողովներում արտադրական
պլանները, մերկացնելով անտնտեսավարությունը
և ազն։ Անհրաժեշտ ե վճռական պայքար մղել յե-
րիտասարդության պրոգուների դեմ, առաջիկա
յերեք-չորս ամիսների ընթացքում անցկացնել
լավագույն յերիտաբանվորի և լավագույն արտա-
դրական բջիջի մրցություն անկուսակցական, բան-
վոր յերիտասարդությունը ներդրավելով արտա-
դրական և կուլտուր-կրթական խմբակների, ա-
կումբների, դռնբաց ընդհանուր ժողովների աշ-
խատանքներին և այլն։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

բ) Կազմակերպության մեջ պարզաբանել XV համագումարի վորոշումները գյուղում կատարվելիք աշխատանքների մասին, նրանց համաձայն գյուղում կազմակերպելով գյուղական ըջիջների աշխատանքը, ամեն մի շրջանում ընտրել բջիջներ, հանձնարարելով նրանց կոմիերիտականների, չքավոլների և միջակների տնտեսություններից կոլտնտեսություններ կազմակերպելու գործը, ուժեղացնելով գործնական ողնությունը արդեն գոյություն ունեցող կոլտնտեսություններին:

Ցերկու ամսվա ընթացքում միջոցներ մշակել բջիջների՝ կոռպերացիալի առանձին ճյուղերին ունենալիք մասնակցության վերաբերյալ (այգեգործական, բամբակագործական, կաթնատնտեսական կոռպերացիոնների և այլն), բջիջների առաջ դնելով կոռպերացիան սոցիալապես անհարազատ տարրերից զտելու հարցը, աշխատանք ծավալելով չքավորությանը կոռպերացնելու ուղղությամբ, հետեւելով վարկերի և չքավորական ֆոնդերի ճիշտ բաշխմանը:

ՀԼԿՅՑԵՄ կենտկոմին՝ մոտիկ ապագալում
սղանավորող կազմակերպությունների և ջրաբն-
տեսության հետ միասին մշակել գյուղական քջիջ-
ների ճանապարհների և ջրալին շինարարության
ու մելիորատիվ ընկերությունների աշխատան-
քներին մամնակցելու հարցը:

դ) կոմիերիտականների մասսալին մոբիլիզա-
ցիաի յենթարկել խորհրդավին անտեսության և
այլ ապարատներում յեղած բլուրոկրատական
աղավաղումների փաստերի գեմ կռվելու, ոգտա-
դործելով Մոսկվայի և Լենինգրադի «Թեթև հե-
ծելազորի» խմբակների աշխատանքի փորձը:

Կենտկոմն առաջարկում ե ՀԼԿՅՑԵՄ կենտ-
կոմին սրել կազմակերպության ուշադրությունը
խորհուրդների առաջիկա վերընտրությունների
վրա, անցկացնելով պարզորոշ դասակարգական
գիծ, վերընտրական կամպանիայի ժամանակ կազ-
մակերպելով աշխատավոր յերիտասարդության
լայն մասսաներին, բատրակներից ու չքավորնե-
րից խորհուրդների մեջ առաջ քաշելով անկու-
սակցական ակտիվ:

Դրա հետ միասին պետք ե կոմիերիտական
կադրեր առանձնացնել խորհուրդների սեկցիա-
ներում և հանձնաժողովներում աշխատելու հա-
մար:

3. Կազմակերպության մեջ զգալի չափով

դասակարգախորեն իդեոլոգիապես անհարազատ
տարրերի գոյությունը (կուլակներ, ունեորներ,
քահանաների վորդիներ, դաշտերիտներ և այլն)
դնում ե կազմակերպությունն անմիջապես նրան-
ցից մաքրելու խնդիրը։ Անհրաժեշտ ե։—

ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ա) Յերեք ամսվա ընթացքում ստուգել կազ-
մակերպության վողջ կազմը, հեռացնելով միու-
թյունից անհարազատ տարրերին։ Անմիջապես
ցըել այն բջիջները, վորոնց կազմում գերակշ-
ռում ե կուլակալին—ունեոր տարրը, այդ աշխա-
տանքի շուրջը կենտրոնացնելով բատրակ ու չքա-
վոր լերիտասարդության ուշադրությունը, ըն-
դունելով նրան կոմսոմոլի մեջ։

Կազմակերպության սոցիալական կազմի
ստուգման ժամանակ կոմիերիտական մասսանե-
րին բացատրել ՀամԼԿՑԵՄ VIII համագումարի
վորոշումները միության աճման հարցերի վերա-
բերյալ։

բ) Կազմակերպությունը դասակարգախորեն
խորթ տարրերից զտելու հետ միաժամանակ լայն
կամպանիա ծավալել, կոմսոմոլի մեջ ընդգրկելու
բանվոր ու բատրակ լերիտասարդությանը, մաս-
նավորապես ողտագործելով միջերիտ որվա և կոմ-

սումոլի տասնամյակի առթիվ ընդունելությունների կամպանիան, ուժեղացնելով բատրակության ու հոտաղների տնտեսաիրավական շահերի պաշտպանության աշխատանքը, այս նպատակով ողտագործելով բատրակների ու հոտաղների աշխանալին հաշվետեսը (հաշիվսերը փակելը), դատի տալով այն վարձողներին, վորոնք չեն կիրառում աշխատանքի որենսգիրքը և անհատական պայմանագիրը, ընդգրկելով բատրակներին ու հոտաղներին Խրճիթ ընթերցարանների, անդրագիտության վերացման խմբակների և բջիջների ընդհանուր ժողովների աշխատանքներին:

Հանձնարարել ՀՀԿՑԵՄ կենտկոմին աշխանը հրավիրել բատրակալին լերիտասարդության շըրջանալին կոնֆերենցիաներ, հետագայում ևս գործադրելով ալի ձեզ, միջոցներ նախատեսելով ալպյան արոտատեղիներում հոտաղների մեջ աշխատելու համար:

4. Կենտկոմը հանձնարարում ե ՀՀԿՑԵՄ կենտկոմին հարց դնել ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջ կոմսոմոլի կուսակցական ղեկավարության վողջ սիստեմը վերից վար վերանայելու անհրաժեշտության մասին, վճռական կերպով բարելավելով կուսղեկավարության վորակը և կոմիտեների կողմից սիստեմատիկ կոնտրոլ ստեղծելով ստո-

բին բջիջների կուսղեկավարման աշխատանքի
վրա: Անհրաժեշտ ե.

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՆԱԳԵՎԸ

ա) Վողջ կոմիերիտական կազմակերպությանը և մասնավորապես բջիջներին կուսրջիջների հետ միասին մասնակից դարձնել տնտեսական, խորհրդավիճ, կուսակցական խնդիրների քննությանը, լայն կերպով պարզաբանելով կազմակերպությանը հայաստանի կոմկուսի մեջ տեղի ունեցած դեպքերի (դեկավարության փոփոխումը) իմաստը, վորպեսզի կոմիերիտանիության անդամները ճիշտ կերպով հասկանան կուսակցական դեկավարության ելությունը (կուսակցության առանձին անդամների, դեկավարների, բջիջների և կազմակերպությունների թույլ տվածությաների, թերությունների և աղավաղումների քննադատությունը – ի պաշտպանություն ընդհանուր կուսակցական գծի):

բ) Կոմսոմոլիի կուսկորիզի պատասխանատը՝ վության բարձրացումը կուսակցության առաջ կոմիերիտական բջիջների աշխատանքների համար:

գ) Բանվոր, բատրակ և չքավոր կոմիերիտականներին վճռականորեն կուսակցարքերն անցկացնելը:

5. Նշելով ստորին կազմակերպությունների


անսմիջապես բջիջներում անցնել ինքնաքննադատության ծավալման մասին Համկաթեմ կենտկոմի նամակի քննությանը։ Ինքնաքննադատության ծավալման, ներմիութենական գեմոկրատիալի կիրառումն ապահովելու, ինչպես պետապարատի, նույնպես ել միության ղեկավարության բյուրոկրատիզմի գեմ պայքարն ուժեղացնելու գործում տեղական մամուլն ավելի աշքի ընկնող տեղ պիտի գրավի։ Մասնավորապես կենտկոմն անհրաժեշտ է համարում «Ավանդարդ» թերթը հրատարակել շաբաթը յերեք անգամ։

6. Մատնանելով ՀԿՅԵՄ Կենտկոմի նախկին դեկադարության կողմից Համկաթեմ Անդրյեկոմի հրահանգները չկատարելու վրդովեցուցիչ փասերը յեվ հավանություն տալով Համկաթեմ Անդրյեկոմի ձեռնարկումներին, ՀԿՅԵՄ դեկադարությունը փոխելու գործում, Համկաթեմ կ. կ. սակայն գտնում ե, զոր Համկաթեմ Անդրյեկոմն անբավարար է կոնտրոլի յենքարեկել ՀԿՅԵՄ նախկին դեկադարության կողմից Անդրյեկոմի առանձին հրահանգների կիրառումը յեվ ուշացրել ե այդ դեկադարության փոփոխումը։

Կենտկոմն առաջարկում է Անդրյեկոմին ուժեղացնել մշտական վերահսկողությունը Հայաստանի ՀԿՅԵՄ կազմակերպության և ՀՀԿՅԵՄ

Կենտկոմի աշխատանքի վրա, Հայաստան մշտական աշխատանիքի ուղարկել բանվոր ակտիվիստների մի խումբ (10 հոգուց փոչ պակաս) և գործնականորեն ոգնել ՀՀԿՑԵՄ կենտկոմին կիրառելու կյանքում Համեկցիոն կենտկոմի վորոշումները, Անդրբերկոմի լերկու աշխատողներին ուղարկել մեկ ու կես ամսից վոչ պակաս ժամանակով ոգնելու կազմակերպությանը:





ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0044684

(256)

A 8041



ԳԻՒՆ 25 ԿՈՊ.

Состояние
ЛКСМ Армении и его
ближайшие задачи.